№ 177 Նոյեմբերի 17 Չինգշաբթի 1883 Նոյեմբերի 17 Չինգշաբթի № 177

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՑ **1884** ԹՎԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՑՆ ԴԻՐՔՈՎ ԵՒ ՆՈՑՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

ՊՐՕԳՐԱՄ

I. ՏԵՂԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԳՈՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆելիետօն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ։ VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 բուբլ, վեց ամսվայ 6 բուբլ, իւրաքանչիւր ամսվայ 1 բուբլ։
ՀԱՍՏՈՎ համարները 5 կոպէկ։
ՀԱՍՑԷՆ։ *Тифлисъ, редакція «Мшакъ»*.

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻ ՈՒՍԱՆՈՂ ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՒՆԵՆԱԼ ԴԱՍԵՐ ՌՈՒՍ և ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ։
ՀԱՍՑԷՆ ՀԱՐՑՆԵԼ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։ 3—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Գործակատարի յիշատակարանից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 13 Նոյեմբերի

Համարեա մի ամիս առաջ ես առիթ էի ունեցել «Մշակի» մէջ հաղորդելու, որ երիտասարդների մի խումբ մտադիր էր առաջիկայ տարին մեր ամենքիցս յարգված տաղանդաւոր վիպասան Բաֆֆիի գրականական քսան և հինգ ամեայ գործունէութեան տարեդարձը տօնելու։ Իմ կողմից ես աւելացրել էի, որ Թիֆլիսի հայ հասարակութիւնը երբէք չէր սխալվելու, եթէ այդպիսի մի յարգանքի ցոյց կանէր «Կայծերի» հեղինակին, որ ահա ամբողջ մի քառորդ դար գործում է մեր աղքատիկ գրականութեան փչոտ ասպարիզում, այն անձին, որը իր բազմաթիւ աշխատութիւնների շարքում տուեց մեզ «Թամսայի մէլիքութիւններ» և «Դաւիթ-բէկ» երկու յիշատակի արժանի և հեղինակի անուանը պատիւ բերող նշանաւոր աշխատութիւններ։

Մեր այդ առաջարկութիւնը չը մնաց առանց արձագանքի, և մենք տեսնում ենք, որ ամեն կողմից ցանկութիւն են յայտնում այդ տօնին մասնակցելու։

Որքան էլ ի սրտէ ցանկանայինք սկսել մեր շրջանի մի քանի հայ երիտասարդների հետ յօբելեանի համար պատրաստութիւններ տեսնելը, այնուամենայնիւ, թող ներելի լինի մեզ խոստովանել, որ մեր ոյժից շատ վեր է կատարել մի այսպիսի յօբելեան, որ իր շքեղութեամբ պատիւ բերէր մի նշանաւոր քաղաքի հայ հասարակութեան, դրա համար մեզ պէսաւորապէս պակասում է ժամանակ, մինչդեռ մեզանից ամեն մէկի իւրաքանչիւր օրը համարեա վաճառված է. մենք այդ գործի ինիցիատիւը առաջարկում ենք մի աւելի կարող անձին, որին խոստանում ենք մեր և մեր ընկերների կողմից ամենայն պատրաստականութիւն կարողացածին չափ նրան օգնել աշխատելու։

Անկրկնայ լինելով, որ մեր թոյլ ձայնը առանց հետևանքի չէր մնալու, մենք այժմ պատիւ ունենք մեր հետևեալ որոշումը հայ երիտասարդութեան առաջարկելու։

1872 թվից սկսած երբ, «Մշակը» սկսեց հրատարակվել, ի միջի այլոց և այդ լրագրի համարներում մեր յարգելի հեղինակը ունի տպագրված, բայց դեռ առանձին գրքոյկով լոյս չը տեսած մի շարք նշանաւոր աշխատութիւնների, և որովհետև լրագրական հին համարներ շատ դժուար էր միասին ձեռք բերել, ուստի այդ աշխատութիւնները շատերի համար անընթերցանելի են։ Այդ հեղինակութիւնների մէջ է և Բաֆֆիի «Չէլալեդդին»-ը, որը մի գեղեցիկ պատկեր է Շէյխի արշաւանքից։ Մենք վճռեցինք այդ վէպը տպագրել առանձին գրքոյկով, գեղեցիկ թղթի վրա և հեղինակի պատկերով, *) յօբելեանի օրը այդ նրան նուիրելու։ Դրանով մենք կարծում ենք որ և առիթ տուած կը լինենք գաւառական հայ երիտասարդներին ևս բարոյապէս մասնակցելու յիշեալ յօբելեանին։

Դրա համար նշանակում ենք բաժիններ առաջին կարգ 10—5 բուբլ. երկրորդ կարգ 3 բուբլ. երրորդ կարգ 1 բուբլ. առաջին կարգերը կստանան գրքոյկ, և բոլոր կարգերի անունները տպագրված կը լինեն գրքի հետ առանձին բրօշիւրայով։

Աւելի դիւրութեան և վստահութեան առթիւ առաջարկում ենք այդ փողերը ուղարկել ուղղակի «Մշակի» խմբագրատուն, որտեղ նրանք կը գումարվեն մինչև կարգադրութիւնը **)։ Իսկ այն անձինք, որոնք կը ցանկանան և բաժանորդներ գտնելու մասին աշխատել, կարող են դիմել մեզ մեր հասցէով (Тифлисъ. Кантора И. Н. Аствацатрянца и К° Абелу Апрѣсову).

Երջանիկ կը համարէի ինձ, եթէ յաջողվելու էր ինձ մի փոքրիկ ծառայութիւն անելու մեր յարգելի հեղինակին և իմ երախտաւոր ուսուցչիս, հեռաւապէս և հայ աղքատիկ գրականութեան։

Բացառապէս ձեզ եմ դիմում հայ երիտասարդ-

*) «Խենթի» հրատարակման ժամանակ ես դիմեցի հեղինակին խնդրելով իրաւունք նրա պատկերը գրքի մէջ զետեղելու, սակայն հեղինակը զըլացաւ այդ պատիւը մեզ. իսկ այժմ մենք չենք կարծում, որ նա կը մերժէր, երբ խնդրողները մի խումբ հայ երիտասարդներ են։

**) Ի նկատի ունենալով «Մշակ»-ի յարգելի խմբագրի աջակցութիւնը ամեն մի բարի գործում, մենք համարձակվում ենք խնդրելու նրանից, որ չը մերժի այդ մասին խմբագրատանը ստացված փողերը ստանալու և գրքերի տպագրութեան ժամանակ կարգադրութիւնը անելու։

Ա. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

—

Այս ասում էր մի գործակատար, որը ընդամենը մի տարի էր ծառայել աղա Գուլամեանցների մօտ։ Մակար աղան նրան չէր սիրում և շատ վատ էր վարվում հետը. ես կարծեցի, որ հէնց այդ էր պատճառը նրա անբաւականութեան։ Սակայն ես զգում էի նրա բոլոր խօսքերի ճշմարտութիւնը. ես գիտէի, որ իսկապէս այն ամենը, ինչ որ նա ասում էր գործակատարների մասին, բոլորը իրաւացի է և արդար։

—Ուրիշ կերպ անկարելի է, պատասխանեց Գրիգորը իր դրութիւնով անբաւական գործակատարին։ Եթէ չը խոնարհվենք, չը հնազանդվենք աղա Գուլամեանցներին եթէ նրանց ուզածը չը կատարենք՝ այս աշխարհում ապրել չենք կարող։ Նրանք սիրում են կեղծաւորութիւն—պիտի կեղծաւորենք, սիրում են շողոքորթութիւն—պիտի շողոքորթենք, սիրում են սուտ ասել—պիտի սուտ ասենք, մի խօսքով ինչպէս նրանք են ուզում—պիտի այնպէս պահենք մեզ, եթէ ոչ, քաղցած կը մնանք։ Ցեսնում ես. այն օրվանից, երբ դու մի փոքր հակառակութիւն ցոյց տուիր Մակար աղային, այն օրվանից դու նրա աչքից ընկել ես, չը նայելով որ դու ճշմարիտ էիր խօսում։ Չէ, եղբայր, հարկաւոր է անել այն, ինչոր քեզանից պահանջում են աղա Գուլամեանցները և ոչ թէ այն՝ ինչոր դու ես ցանկանում, ուրիշ ճար չը կայ, եթէ ուզում ես նրանց աչքում հաւանելի լինել։ Ես էլ առաջ շատ էի նեղանում իմ պաշտօնից և շատ ժամանակ ինքս ինձ ասում էի, թէ ինչ հարկաւոր է սուտ խօսել, կեղծաւորել, երբ որ առանց այն կարելի է վարվել, բայց յետոյ տեսայ, որ այդ անկարելի է, քանի որ աղա Գուլամեանցները կամայ ակամայ ստիպում են ամենայն ինչ անել, և ծառայելով նրանց անհնարին է սուտ չասել կամ չը խաբել։ Այժմ ինձ համար մի և նոյն է. չեմ էլ մտածում թէ օրական քանի անգամ եմ սուտ ասում և քանի անգամ խաբում, որովհետև հէնց իմ ամբողջ օրվայ խօսակցութիւնը սուտ է և նրա մէջ ոչ մի ուղիղ խօսք չէք գտնի։ Ինչ որ խօսում եմ Մակար աղայի հետ, ոչ մէկը ուղիղ սրտից չեմ խօսում, այլ կեղծաւորում եմ և ինչու չը կեղծաւորեմ, չը շողոքորթեմ, երբ որ ինքը սիրում է. ինձանից խօմ սրանով մի բան չէ պակասում. այսպէս չեմ խօսի, այնպէս կը խօսեմ, այդ չեմ ասի, այն կասեմ, այդ բոլորը, իմ կարծիքով, մի և նոյնն է, միայն հարկաւոր է աչքի առաջ ունենալ թէ ո՞րն է շահաւէտ։ Աղա Գուլամեանցները եթէ իրանց ամբողջ կեանքը սուտ ասելով, կեղծաւորելով, սրա և նրա ոտերը լզելով, խաբելով չանցկացնէին՝ հաւատացնում եմ ձեզ այսօր այնքան հարստութեան տէրեր չէին կարող լինել։ Փողը, եղբայր, ամենայն բան ուժով ստիպում է մարդուս անել—այդպէս չէ։

Գործակատարները բոլորը զրական պատասխան տուին Գրիգորին և հաւանեցին նրա ասածները, բացի այն մէկից, որը իր պաշտօնով անբաւական էր։ Իսկ ինչ վերաբերում ինձ, ես՝ ճշմարիտն ասած, համաձայն էի նրանում, որ մենք գործակատարներս իսկապէս թաղված ենք այդ բոլոր կեղտոտութիւնների մէջ, բայց ինչպէս անել. չը համաձայնվել Գրիգորի հետ, որ մի կտոր հացի տէր լինելու համար անհրաժեշտ է լինել Մակար աղայի առաջ կեղծաւոր և շողոքորթ, չէի կարող, քանի որ արդէն ճանաչում էի վերջինին և գիտէի, որ առանց սրանց անհնար է նրա մօտ երկար մնալ։ Իսկ ես ուզում էի նրա մօտ ծառայել ունենալով աչքի առաջ իմ ապագան. ես չէի ուզում աղքատութեան մէջ ապրել, ինչպէս իմ հայրը. ես ցանկանում էի իմ ապագան նիւթապէս ապահոված տեսնել։ Ո՞վ է աղա Գուլամեանցներին այսօր մեղադրում, ո՞վ է նրանց պախարակում Աթոյեանցի փողերը ուտելու մասին. ոչ ոք, ընդհակառակը ամենքն էլ նրան պատում են, յարգում են, փողոցով անցնելիս գլուխ են տալիս հեռուից, իսկ իրանք հպարտ ու գոռոզ ոչ ոքի վրա ուշադրութիւն չեն դարձնում, ոչ ոքի հետ չեն ուզում խօսել և ինչ հարկաւոր է ուշադրութիւն դարձնել, քանի որ առանց ուրիշների էլ կարողանում են ապրել։

—Այսքան տարի ծառայելով—շարունակեց Գրիգորը—ես վերջապէս հասկացել եմ, որ վաճառականութեան մէջ մարդ չէ կարող մնալ ազնիւ, մաքուր, ճշմարտախօս. չէ կարող որովհետև, վաճառականութիւնը այդպիսի մարդկանց չէ սիրում։ Վաճառականութեան մէջ ամենքը պիտի զրահաւորված լինեն մի զէնքով, որպէս զի կարողանան իրանց գոյութիւնը շարունակել, այդ զէնքն է ստախօսութիւնը և խաբեբայութիւնը. բոլոր վաճառականները պիտի խաբող և ստախօս լինեն, ուրիշ կերպ չէ կարելի լինել, քանի որ ինքն վաճառականութիւնը հիմնված է հէնց խաբեբայութեան և ստախօսութեան վրա։ Ես երբէք չեմ մեղադրում վաճառականին, երբ նա խորամանկութիւն է անում, ստախօսում է, խաբում է, չեմ մեղադրում, որովհետև գիտեմ, որ նա կամայ ակամայ ստիպված է այդպէս վարվել։ Վաճառականաց մէջ հաւատացէք, որ ճշմարտութիւն և աղնուութիւն ասված բաները դատարկ բաներ են. փողը, այն անիրաւ ոսկին ամենայն բան մարդուս մոռացնել է տալիս, մինչև անգամ խիղճն էլ, հոգին էլ, հաւատն էլ։ Աչքներդ բաց արէք և լաւ մտիկ արէք մեր համքարներին. տեսէք ով է կարող պարծենալ, որ ազնիւ, առաքինի և ճշմարտասէր մարդ է,—ոչ ոք. ամենքը իրարու խաբում են, կողոպտում են։ Աթոյեանցին խաբում է և կողոպտում Թոթովեանցը, աղա Գուլամեանցները խաբում են ու կողոպտում Թոթովեանցին, վաղը մի ուրիշը դուրս կը գայ նոյնը կանէ և աղա Գուլամեանցների հետ և այսպէս կը շարունակվի անվերջ։ Ես ինքս եթէ դէպք պատահի, եթէ ձեռքս ուրիշի փողեր ընկնեն, առանց խղճալու կը կլանեմ և այդ բոլորովին խղճի դէմ չեմ համարի, որովհետև հաւատացած եմ, որ այդ ուրիշն էլ անչուշտ մէկ մարդից գողացած է այդ փողերը....

Գրիգորը չը կարողացաւ շարունակել իր խօսքը, որովհետև այդ ժամանակ ներս մտաւ մի մուշտարի և մենք ցրվեցինք մեր տեղերը նրան ընդունելու։

Այդ խօսակցութիւնը ինձ խիստ հետաքրքրելի էր. շատ ափսոսեցի, որ նա ընդհատվեց։ Նա ինձ համար հետաքրքրելի էր նախ՝ որ ես իմացայ այն ծերունու գաղտնիքը, որը եկեղեցում աղօթելու ժամանակ սպառնալի հայեացք էր ձգում Մակար-աղայի վրա և երկրորդ՝ որ առիթ էր տալիս ինձ ծանօթանալու գործակատարների հետ, թէ ինչպէս են վերաբերվում նրանք դէպի իրանց պաշտօնը և Մակար աղայի շահերը։ Թէև այս խօսակցութեան մէջ գործակատարները ոչինչ աղա Գուլամեանցների շահերի ընդդէմ բան չէին ասում, այլ միայն ընդհանուր կերպով քննադատում էին բոլոր վաճառականներին, բայց այսու ամենայնիւ ես աշխատում էի անհաւատարմութեան գէթ մի նշոյլ գտնել նրանց մէջ դէպի աղա Գուլամեանցները, որ ծածուկ կերպով յայտնեմ Մակար աղային, որպէս զի սրանով ձգելով միւս գործակատարների վարկը նրա աչքում բարձրացնեմ իմ սեպհականը։ Անիմաստութիւն էր, թէ ոչ, իմ կողմից, ինձ համար բոլորը մէկ էր, միայն թէ ես սիրելի դառնայի Մակար աղայի աչքում և գրաւէի նրա վստահութիւնը. ինձ համար բոլոր միջոցները արդար էին, միայն թէ նրանք հասցնէին ինձ նպատակիս. ես ամենայն բոպէ յիշում էի մանրավաճառ Թորոսի խրատը և միշտ մտաբերում էի նրա խօսքերը թէ «սուտ ասիր, խաբիր, խորամանկութիւն արա, միայն թէ մէջտեղ չահ ունենաս»։

Երեկոյեան, սովորականին համեմատ, ես աղա Գուլամեանցների տանն էի, Մակար աղան իր

ներ. բաւական չեն միայն համակրութիւններ խօսքերով. մենք մեր ձեռքի եկածին չափ պիտի օգնենք մեր պաշտելի վիպասանին. պէտք է միջոց տանք նրան աւելի եռանդով աշխատելու. թող զանազան չարամիտ անձինք աշխատեն ստուեր ձգել նրա անուան վրա. հեռու չէ այն ժամանակը, որ կը գայ դատապարտելու այդպիսիների գործեր, և ապագայ սերունդը խորին յարգանքով կը վեր առնէ իր ձեռքը Բաֆֆիի և նրա նմանների աշխատութիւնները:

Աբէլ Ապրէսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 12 Նոյեմբերի

Ցոյս ունեմ, որ երկտող նամակիս մի անկիւն կը շնորհէք ձեր լրագրի էջերում:

Մողնու ս. Գէորգ եկեղեցու միաբանութեան կողմից ես ստիպված եմ վերստին մի հրաւէր կարդալու Նրա պատկառելի, բայց եկեղեցու վերաբերմամբ անտարբերութեան մէջ նիրհող ծխական և ժամաւոր ժողովրդականներին, որ Նրանք բարեհաճեն շնորհ անել վերստին ներկայանալ նոյն եկեղեցին ներկայ նոյեմբեր ամսոյս 27-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին, և ապա ս. Գայիանեան ուսումնարանի դահլիճը երեցփոխան ընտրելու այդ եկեղեցոյ համար: Տար Աստուած, որ այս անգամ նրանք պատրաստված գային, որ նրանք իմաստասիրած լինէին եկեղեցու այժմեան կարիքները, այն եկեղեցու, որը մի օր բարձրագոյնս փայլում էր Թիֆլիսի բոլոր եկեղեցիների մէջ, բայց այժմ նսեմացած է: Այն եկեղեցու, որը նուիրել է ս. Գայիանեան օրիորդական ուսումնարանին մի հոյակապ ուսումնարանական շինութիւն, որը օժանդակել է սրան իր գոյութեան օրից մինչև այսօր շատ նիւթական և բարոյական միջոցներով, բայց այժմ անուշադիր է թողնուած նոյն իսկ ուսումնարանի մէջ գործող երիտասարդութիւնից, ինչպէս մի քանի տարի առաջ Նրա հաղարները և 10 հազարները շռայլողներից: Պարոններ. ուշադրութիւն դարձրէք այն ս. տաճարին, որը տուել է ձեզ մի այլ նուիրական տաճար, մի հանրաձանօթ օրիորդական ուսումնարան, և շնորհեցէք դրան մի համապատասխանող անտես—մի պատկառելի, դրական և խոհական բնաւորութիւն ունեցող երեցփոխան: Եթէ ոչ ապագան ձեզ վրա պատուաւոր կերպով չի խօսի:

Եկեղեցի և ուսումնարան, ոչ ապաքէն դրանք մի հոգի և մի մարմին են, բաժանել դրանց—մինը հոգալ, միւսը անտես անել, այդ կը նշանակէ մեր ձեռքով կործանել մեր սեփական պարծանքը: Բաւական է որ մտածենք:

Խնդրում եմ մեր պարբերական միւս հրատարակութիւններին մի համառօտ լուր տան յիշեալ կիրակվայ ընտրութեան մասին:

Անդամ յանձնաժողովոյ առաջնորդական յանձնարարութեանց՝

Մուշեղ քահ. Տէր-Ղևոնդեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են: «Այս օրերս Եկատերինֆելդ գերմանական կոլոնիայից քաղաքս ժամանեցին բազմաթիւ հաստափոր տիկեր, մօտ 10,000 վեղրօ գինով լի: Հաւատացնում են, որ այս գինու պաշարը (500 տան համար), հազիւ թէ մինչև Զատիկը բաւականանայ: Երևի մեր քաղաքացիները դրամական անձկութեան և մանկութեան վիշտը խեղդելու են գինու մէջ: Գեղեցիկ առաջադիմութիւն:»

—

Նոյն տեղից գրում են հետևեալը: «Մեր ուսումնարանին կից ընթերցարանի գրութիւնը բաւական աննախանձելի է. անդամների թիւը, փոխանակ աւելանալու, հետզհետէ պակասում է, անդամական վճարները կանոնաւորապէս չեն հատուցվում: Թէև ժողովուրդը ընթերցասէր է, բայց մասամբ չէ ընտելացած ընթերցարան յաճախելուն և մասամբ էլ սիրում է ձրիաբար կարդալ, օգտվելով լրագիր սատացողներից և ընթերցարանի անդամներից: Այդ է պատճառը, որ մեր ընթերցարանը չէ կարողանում ծածկել իր ծախսերը անդամական վճարներով, այլ պահպանվում է միայն մի քանի երիտասարդների տուած ներկայացումների արդիւնքով: Այս բոպէիս ընթերցարանը գտնվում է մի անյարմար տեղում և նրա մէջ նստարաններ չը լինելու պատճառով այցելուները ստիպված են ոտի վրա կանգնել: Ընթերցարանը լուսաւորվում է մի աղօտ լոյս տուող լամպայով, որ մի գիւնատան արժանի է: Ցանկալի է, որ հիմնադիր անդամների ժողովը իր նախագահի հետ աշխատեր ոտի կանգնեցնել ընթերցարանը, որ մի այդպիսի խուլ անկիւնում գտնվող քաղաքում մի շատ օգտակար հաստատութիւն է հասակաւորների համար»:

—

«Русскій Курьеръ» լրագիրը հաղորդում է, որ առևտրի և մանուֆակտուրայի բաժնում ներկայումս հարց է ծագել Կուր գետի վրա (Կովկասում) հիմնել ճրագու հալելու գործարաններ ձկնից առհասարակ և լօքոներից մասնաւորապէս, որովհետև լօքոների ահագին քանակութիւն իզուր կորչում է, սատակած լինելով և փտելով գետի ափերի վրա առանց օգուտ քաղելու նրանցից: Այդ ճրագուից կը պատրաստվի իւղ անիւների համար և ամեն տեսակ սոսինձ (клей) գործարանների մէքենաների համար: Իսկ աչքի առաջ ունենալով առողջապահական պայմանները, ձկան ճրագուն ուրիշ բաների համար չը պէտք է գործածվի: Այդ նպատակով խիստ վերահսկողութիւն կը լինի ճրագու հալելու և նրա արդիւնաբերութեան վրա:

—

Մեր լրագրում հաղորդել էինք մայրաքաղաքների լրագիրների այն լուրը, որ Ն. Գ. Զէրնիշէվսկին հասել է Աստրախան քաղաքը: Այժմ «Заря» լրագիրը աւելացնում է, որ Զէրնիշէվսկին բնակութիւն հաստատեց այնտեղ իր կնոջով և հասակ առած զաւակներով:

—

«Кавказъ» լրագրում կարդում ենք հետևեալ հետաքրքիր լուրը: Մենք կարող ենք հաղորդել մեր ընթերցողներին մի վերին աստիճանի ախորժելի և ուրախալի նորութիւն. կառավարութիւնը ուշադրութիւն դարձրեց այն բանի վրա, որ Թիֆլիսում գոյութիւն ունեցող երկու գիմնազիաների մէջ աշակերտները լցված են և որ քընութիւն տուողներից շատերը, տեղ չը լինելու պատճառով, զրկվում են գիմնազիական կրթութիւն ստանալու միջոցից, և վճռեց 1884 թուի սեպտեմբերից բանալ այստեղ երրորդ կլասիկական գիմնազիա: Այդ վճիռը ակնյայտնի ցոյց է տալիս մեզ բարձրագոյն վարչութեան առհասարակ և կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հոգացողութիւնը մասնաւորապէս՝ տեղական ազգաբնակութեան շահերի մասին, որը, ի հարկէ, համակրութեամբ կը վերաբերվի այդ կարգադրութեանը: Ներկայումս արդէն զբաղված են գիմնազիայի համար տուն որոնելու հարցով. լուրեր են տարածվել, որ շատ կարելի է, գիմնազիական վարչութիւնը կը գնէ իր տունը ուսումնարանական վարչութեանը, ուր բնակվում էր փոխարքայի օգնականը. տեսնված են և մի քանի մասնաւոր տներ:

—

«Դրօէբա» լրագրում կարդում ենք. «Ընթերցողները գիտեն, որ վերջին ժամանակներում շաքարի գինը խիստ բարձրացաւ: Շաքարի թանգանալու պատճառը ոչ թէ նրա սակաւութիւնից է, այլ այն մենաւաճառներն են, որոնք շաքարի ամբողջ արդիւնաբերութիւնը և առևտուրը ձեռք են զցել: Այդ հանգամանքը շատ վատ ազդեցութիւն ունի ժողովրդի վրա, որովհետև այժմ համարեա իւրաքանչիւր աղքատ ընտանիք գործ է ածում շաքար և անցաւ այն ժամանակը, երբ շաքարը միայն հարուստ ընտանիքների գործածութեան առարկայ էր: Ինքն կառավարութիւնը ևս ուշադրութիւն է դարձրել այդ բանի վրա և մտադիր է օտար երկրներից անմաքս շաքարի մուտքը թոյլ տալ որով Ռուսաստանում շաքարի գինը կրկին սովորական կը դառնայ: Եթէ կառավարութեան այդ մտադրութիւնը կիրականանայ, մեծ թեթևութիւն կը լինի ժողովրդի համար, որովհետև արտասահմանի շաքարը շատ էժան է գնահատվում. օրինակ, ֆրանսիական շաքարը, Պարսկաստան տանելով միասին, պուդը վեց բուբլ է նստում, իսկ ռուսական շաքարը բուն իր տեղում պուդը ութ բուբլի արժողութիւն ունի»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Liberté» լրագիրը հերքում է բօրսայի վրա տարածված անհանգստացնող լուրերը Տօնկինի գործերի վերաբերութեամբ: Վերջին տեղեկութիւնների համեմատ պատերազմական գործողութիւնները Զօնտայի դէմ երևի արդէն սկսված են: Բօրսայի վրա այդ տեսակ լուրեր տարածող մարդը կալանաւորված է:

—«Paris» լրագրի խօսքերի համեմատ ծովապետ Կուրբէ տեղեկացաւ, որ Սև դրօշակները օգնութիւն են ստանում Կանտօնի փոխարքայից և այդ պատճառով ծովապետը պահանջում է, որ ֆրանսիական նաւատորմը չինական ջրերի մէջ ուժեղացվի:

—Պատգամաւորների ժողովը մի մասնաժողով նշանակեց, որ պէտք է քննէ պահանջված նոր կրեդիտները Տօնկինի համար: Մասնաժողովի մ

առանձնասենեակումն էր: Սատանան հէնց բթում էր ինձ, որ անպատճառ գնամ Նրա մօտ և պատմեմ գործակատարների այն օրվայ խօսակցութիւնը մի քանի տող էլ իմ կողմից աւելացնելով, որ ցոյց տամ Նրանց անհաւատարմութիւնը: Մի քանի բոպէ ես տատանման մէջ էի «գնալ, թէ չը գնալ». մի կողմից չէի ուզում գնալ, որովհետև վախենում էի Մակար աղան իմ խօսքերին չը հաւատայ, միւս կողմից՝ ցանկանում էի գնալ մտաբերելով որ ինձ վարձելու օրը Մակար-աղան հէնց ինքը պատուիրել էր յայտնել իրան այն ամենը, ինչոր ես կը լսեմ ուրիշներից իր վերաբերութեամբ: Մինչև իմ վճռելը, բարեբաղդաբար, ինքը, Մակար աղան ծառայի միջոցով կանչեց ինձ իր մօտ: Առաջին անգամ չէր որ ես մտնում էի Նրա առանձնասենեակը. վերջին ժամանակները նա սովորութիւն էր արել երբեմն ինձ կանչել իր մօտ և զանազան բաների մասին ինձ հարց ու փորձ անել: Լինելով կասկածաւոր բնաւորութեան տէր մարդ, Մակար աղան ուզում էր, որ ամենայն բան իրան յայտնի լինի և այդ պատճառով ինձանից շատ անգամ այնպիսի չնչին բաների մասին տեղեկութիւններ էր պահանջում, որ ես զարմանում էի. օրինակ նա հարցնում էր թէ գիշերները այս կամ այն ծառան ինչ է անում իր սենեակում, վաղ է պառկում քնելու, թէ ուշ, քանի բաժակ է թէյ խմում, ինչքան անգամ է օրը հաց ուտում և այլ այսպիսի մանր բաների մասին: Երբ մտայ առանձնասենեակը, Մակար աղան թէյ էր խմում. ես գլուխ տուի Նրան և դռան կողմը կանգնեցի ձեռքերս դարսած սպասելով, թէ ինչ պիտի հրամայէ ինձ:

—Հըմ, ինչ կայ, ինչ չը կայ, պարոն Խաչի:

Պէտք է ասած, որ վերջին ժամանակները Մակար աղան սովորութիւն ունէր ուրախ ժամանակին ինձ հետ խօսելիս «պարոնը» կպցնել իմ անունը մի տեսակ ծաղրածութեամբ արտասանելով այդ մականունը:

—Ձեր հրամանոց առողջութիւնը, Մակար աղա, մի այնպէս բան չը կայ, որ ձեզ հետաքրքրի—պատասխանեցի ես գլուխս համեստութեամբ խոնարհեցնելով:

—Ինչպէս թէ չը կայ. այսօր ես մինչև երեկոյ մտագրնում չեմ եղել, ինչ են արել գործակատարները:

—Ի՞նչ պէտք է անեն, միթէ դուք չը գիտէք, թէ ձեր հրամանը մտագրնում չեղած ժամանակը միշտ ինչ են անում:

—Ի՞նչ է. էլի մի բան կայ:

—Ո՛չ, մի այնպիսի բան չը կայ, ուզում եմ ասել, որ երբ դուք մտագրնում չէք լինում առհասարակ գործակատարները մի փոքր խելօք չեն մնում—պատասխանեցի ես գլուխս աւելի քարշ գցելով, իբրև թէ խիստ ամաչում եմ Մակար աղայից:

—Գիտեմ ինչպէս են պահում իրանց, երբ ես այնտեղ չեմ լինում հաւաքվում են միասին և ռեխները ծռած սովրաթ անում, իսկ մուշտարիները գալիս են ու դատարկ յետ գնում:

—Լաւ կը լինէր, եթէ սովրաթ անէին իրանց վերաբերեալ բաների մասին, բայց Նրանք շատ ժամանակ դատողութիւններ են անում իրանց գլխից մեծ գործերի մասին:

—Ասա տեսնեմ՝ ինչ գործերի մասին են դատողութիւններ անում, հարցրեց Մակար աղան անհամբերութեամբ, բարկացած և տեղից բարձրանալով:

Ես մի փոքր յետ քաշվեցի ցոյց տալու համար, թէ իրը վախում եմ Նրանից:

—Ձեր գործերի մասին են խօսում և ձեզ բամբասում են:

—Ի՞նչպէս թէ ինձ բամբասում են:

Մակար աղայի հետաքրքրութիւնը հասաւ վերին աստիճանի. ես ինձ միամիտ ձևացրի, որ իբրև թէ իմ ասածին ինքս այնքան նշանակութիւն չեմ տալիս:

—Ինչ են խօսում իմ վերաբերութեամբ, պատմիր չուտով—կրկնեց Նա:

—Ասում են դուք լաւ մարդ չէք, խաբող, սուտասաղ էք, էհ, ինչ գիտեմ, ուրիշ այդպիսի չատ բաներ են ասում:

—Էլ ինչ են ասում:

—Թէ դուք ձեզանից մեծերին և ուժեղներին կեղծաւորում էք ու շողոքորթում, իսկ փոքրերի առաջ հպարտ ու գոռոզ էք պահում ձեզ, թէ դուք գողութիւնով և խաբեբայութիւնով էք այսքան հարստութեան տէր դարձել և Գրիգորը պատմում էր, թէ իրան խաբել էք մի ինչ որ Աթոյեանց աղգանունով վաճառականի, նրա 75 հազար մանէթ փողը կուլ էք տուել, յետոյ խաբել էք ծերունի Թոխմախեանցին և նրա 30 հազար մանէթն կերել: Այդպիսի և սրանց նման չատ բաներ են ասում, Մակար աղա. ես չէի ուզում լսել Նրանց էլ, որովհետև ինձ չատ վատ էր թւում որ իմ աղայիս մասին այսպիսի ստեր են հնարում և այն էլ այնպիսի մարդիկ, որոնք ձեր հացով են ապրում: Բայց ինչ պիտի անէի. մտագրնից դուրս գալ չէի կարող, Նրանք խօսում էին, ես էլ ականջ լսում էի: Մակար աղան բարկութիւնից դունատվեց. ես խնայեցի Նրանից վախենալ: Բայց չուտով էլի ուզեցի ինձ:

—Յետոյ էլ ինչ էին խօսում այն չ.. զարմերը:

—Ի՛հ, Մակար աղա, չատ բաներ էին ասում, բայց ով է հաւատում այնպիսիների ասածին:

—Հաւատում են, թէ չեն հաւատում, այդ քեզանից հարցնող չը կայ, դու պատասխանիր այն, ինչ որ ես եմ քեզանից հարցնում:—Ասա տեսնեմ, էլ ինչեր էին խօսում—ասեց Մակար աղան կատաղած, այնպէս որ ես սկսեցի դողալ:

—Միայն ձեր վրա չէին խօսում, այլ բոլոր վաճառականների վրա, թէ նրանք ամենքն էլ սուտ ասողներ են, խաբողներ են, գողեր են, աւազակներ են, կողոպտողներ են և թէ նրանց մօտ ծառայողներն էլ պէտք է իրանց նման լինեն, որովհետև ուրիշ կերպ չեն կարող լինել:

—Այդ ո՞ր գործակատարն էր ասում:

Ես յիշեցի Գրիգորի և մէկէլ պաշտօնից անբաւական գործակատարների անունները:

—Այդ էր իմ լաւութեան պտուղը... փողոցներում ոտաբոբիկ լակոտներ էին, հաւաքել եմ բերել մի կտոր հացի տեր չլինել, այժմ ինձ էլ չեն հանանում. արի այժմ աղքատներին ողորմութիւն արա, խղճա նրանց վրա, Մակար: Ես գիտեմ այսուհետև, թէ ինչպէս է հարկաւոր վարվել նրանց հետ:

—Գրիգորը ասում էր, թէ մինչև անգամ ինքն էլ պատրաստ է ուրիշի փողերն ուտել, եթէ ձեռք ընկնի. օրինակ, ասում էր «եթէ ազա Գուլամեանցների փողերից մի ասը կամ տասնու հինգ հազար մանէթ ձեռքս ընկնի, ես առանց երկար մտածելու կը սեպհականացնեմ և չեմ վերադարձնի, որովհետև այդ մեղք չէ, քանի որ ազա Գուլամեանցներն էլ Աթոյեանցի և Թոխմախեանցի փողերն են կլանել. գողից գողութիւն անելը մեղք չէ»: Դա աւելացրեց, որ այժմ հէնց ձեզ մտածում է այն նպատակով, որ մի մեծ գումար գողանայ ձեզանից ու փախչի:

Այս անգամ Մակար աղայի կատաղութիւնը սահմանից դուրս եկաւ. նա սկսեց շտապով քայլել. իմ խօսքերը ասեղների նման ցցվում էին Նրա սրտում:

—Լաւ գնա—դարձաւ վերջապէս ինձ:

—Բայց, ազա, մի բան եմ խնդրում ձեզանից:

—Ի՞նչ ես ուզում:

—Ո՛չ դուք գործակատարներին չը յայտնէք, թէ ես եմ այս ամենը ձեզ պատմել. առանց այն էլ Նրանք ինձ հետ լաւ չեն վարվում, այս անգամ ինձ բոլորովին ծեծելով կը սպանեն: Դուք գիտէք, որ ես մի խեղճ մարդու աղայ եմ, մտնում եմ ձեզ մօտ մի կտոր հաց ուտելու, պարտաւորեմ այս հացի փոխարէն ձեզ հաւատարմութեամբ ծառայելու, ես իմ պարտքս եմ կատարում:

—Լաւ է, գիտեմ, դուրս եկ կորիր:

Միւս օրը առաւօտեան Մակար աղան մտադրնից վռնդեց Գրիգորին և այն գործակատարին, որ իր դրութիւնով անբաւական էր: Վերջին պաշտօնը Մակար աղան յանձնեց ինձ:

(Կը շարունակվի)

ժամանութիւնը սկզբունքով համաձայն է կառավարութեան առաջարկութիւնների հետ միայն այն պայմանով, որ այդ հարցի վերաբերեալ բոլոր զօկումենտները ներկայացվեն պատգամաւորների ժողովին։

—Ֆրանսիական ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան առնը մի մարդ մտաւ բէվօլվերը ձեռքին և յայտնեց, որ կամենում է սպանել թիւլ Ֆերրին։ Նրան իսկոյն կալանաւորեցին և նա յայտնեց, թէ ինքը ուղարկված է Լիլլի ադնիչխանականների մասնաժողովից։

—«République Française» լրագիրը Լիմէրի յիշատակին մի համակրական և ջերմ յօդուած է նուիրում, «Վերանորոգումն, ասում է լրագիրը, նոր պատմութեան սկիզբն է, իսկ Լիմէր նրա ստեղծողը։ Նա վառեց եւրօպական քաղաքակրթութեան ջահը և նրանով առաջնորդեց իր ժամանակակիցներին։ Այդ պատճառով նա պատկանում է ոչ թէ Գերմանիային, այլ ամբողջ մարդկութեանը։ Մեծ մարդու ծննդեան չորս հարիւրամեակի այս հանդիսաւոր օրը ոչ ոք անտարբեր այցելու չը պէտք է լինի, ոչ ոք նրանցից, որոնք հաւատում են առաջադիմութեանը և արդարութեանը, որոնց այդ հզօր յեղափոխականը անմոռանալի ծառայութիւններ մատոյց»։

—Բերլինի «Börsen Courier» լրագիրը հաղորդում է, որ իշխան Բիսմարկ, վերադառնալով Ֆրիդրիխսրուհից այնպիսի եռանդով սկսեց զբաղվել արտաքին քաղաքականութեամբ, որ երկրի ներքին պահանջները երկրորդական դիրք են բռնել։ Ամբողջ Եւրօպան գիտէ, որ Բիսմարկ միշտ պատերազմի թշնամի է եղել, և այժմ նա ամեն կերպ աշխատում է Ցօնկինի հարցը խաղաղութեամբ վերջացնելու համար։ Արտաքին քաղաքականութեան հարցերից ներկայումս իշխան Բիսմարկին ամենից շատ հետաքրքրում է ֆրանս-չինական հարցը և կանցլերը աշխատում է այդ հարցը լուծելու համար։ Հաւատացնում են, որ հէնց այդ նպատակով Բիսմարկ կամենում է փոխել գերմանական դեսպանին Պեկինի մէջ։ Պարզ և շատ անդամ արտայայտված են այն շարժառիթները, որոնք ստիպում են Բիսմարկին այդպէս վարվել։ Գերմանիայի քաղաքականութիւնը բացի խաղաղութիւնը պահպանելուց ցանկանում է, որ հանրապետական կառավարչական ձևը Ֆրանսիայի մէջ չը կորցնէ իր ոյժը և փայլը։ Պատերազմական տեսակէտից Ֆրանսիայի անաջողութիւնները Չինաստանի հետ պատերազմի ժամանակ առաջինի համար մեծ նշանակութիւն չեն ունենայ, բայց հանրապետական կառավարութեան փայլը Ասիայի մէջ կանհետանայ։ Որովհետև գերմանական կառավարութիւնը համոզված է, որ միապետական յեղափոխութիւնը Ֆրանսիայի մէջ անպատճառ կը խախտէ եւրօպական խաղաղութիւնը, ուստի Բիսմարկ բոլոր ջանքերը և միջոցները գործ կը դնէ հանրապետութեանը սպառնացող վտանգների առաջն առնելու համար։ Այդ տեսակէտից գերմանական կանցլերը ցանկանում է, որ ֆրանս-չինական անբարեկամութիւնը խաղաղութեամբ վերջանայ։

—«Figaro» լրագրին հաղորդում են, որ աւստրիական կայսր Ֆրանց-Յովսէփ մտադիր է գնալ Տուրին աշխարհահանդիսին, որտեղ նա կը հանդիպի գերմանական թագաժառանգին և իտալական ու սպանիական թագաւորներին։ Գերմանական լրագիրները նկատում են, որ այդ լուրը կարօտ է պաշտօնական հաստատման։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Չեխական նորթատրօնի մասին։ Պրագայից գրում են «Temps» լրագրին հետևեալը։ Եկող կիրակի կը կայանայ չեխական նոր թատրօնի բացումը։ Այդ հոյակապ շինութիւնը զանվում է մեր քաղաքի ամենալաւ և ամենալայն փողոցներից մէկում, Վէյսավայի ափի վրա։ Այդ շինութիւնը ամենալաւ ապացոյց է չեխական ժողովրդի զօրութեան և դիմացկունութեան։ Քսան տարի առաջ ծագեց թատրօն կառուցանելու միտքը։ Այդ ժամանակ Բոհէմիան զանվում էր գերմանացիների տիրապետութեան ներքոյ, և ազգային կեանքը նոր էր սկսում զարթնել։ Այնու ամենայնիւ, ամբողջ ազգը համակրութեամբ վերաբերվեցաւ այդ մտքին և պատիւ համարեց նպաստել նրա իրագործմանը. հարուստները և աղքատները մոցրին իրանց նուիրատուութիւնները։ Բայց շինութեան կառուցումն դանդաղ էր առաջ գնում, որովհետև չեխական ժողովուրդը հարուստ չէ։ Վերջապէս, աշխատանքի և զոհաբերութիւնների երկար տարիներից յետոյ թատրօնի շինութիւնը աւարտվեցաւ։ Դեռ ևս 1881 թվին յոյս ունէին բանալ նրան, բայց դժբախտ ճակատագիրը հալածում էր չէխերին։ Թատրօնի բացման հէնց նախընթաց օրը թատրօնում հրդեհ ընկաւ և ոչնչացրեց նրա ամբողջ ներքին մասը։ Թատրօնական դահլիճը և բեմը, գեղեցիկ նկարչութիւնը կրակի ճարակ դարձան։ Այստ ամենայնիւ չէխերը չը յուսահատվեցան. ընդհակառակն, կարծես թէ դժբախտութիւնը նոր արիութիւն ծնեցրեց նրանց մէջ։ Մէկ օրն և եթ սառարդութիւն բացվեցաւ, և նուիրատուութիւնները սկսեցին ամեն կողմից գալ։ Ես ինքս տեսայ, թէ որպէս աղքատ աղախիններ և աղջիկներ բերում և տալիս էին մասնաժողովին իրանց համեստ գարդարանքները և խնդրում էին ծախել դրանց յօգուտ այդ ազգային գործի։ Բանուորները տալիս էին իրանց շաբաթական աշխատանքի մի մասը, արհեստաւորները իրանց աշխատանքն էին առաջարկում ձրի։ Նուիրատուութեան հետևանքը սպասածից աւելի էր։ Թատրօնի շինութիւնը, որի կառուցման համար տասն տարի հարկաւորվեցաւ, երկու տարում կատարելապէս վերանորոգվեցաւ։ Հասկանալի է որ այդպիսի պայմաններում չէխական թատրօնի բացումը ազգային հանդիսի բնաւորութիւն ստացաւ։ Մասնաժողովը հրաւէրներ ուղարկեց բոլոր «սլաւօնական եղբայրներին»։ Այստեղ սպասում են այցելուների մեծ բազմութեան Մօրավիայից, Խորվատիայից, Ռուսաստանից և Լեհաստանից։ Թատրօնի բացման առիթով լինելի առաջին ներկայացումը կազմված է չէխ գրողների հեղինակութիւններից և խոստանում է փառաւոր լինել։ Մեր դրամատիական և ողբերգական խումբը, որը մինչև այժմ խաղում էր ժամանակաւոր թատրօնի փոքրիկ, բայց գեղեցիկ բեմի վրա, երևելի դերասաններ և դերասանուհիներ ունի, որոնք առաջին ներկայացմանը գեղարուեստական նշանակութիւն կը տան։

* * *

Կրկին Տուրգենէվի ուղեղի մասին։—«St. Petersburger Zeitung» լրագիրը ասում է, որ նորերումս ռուսաց մամուլին լուր հասաւ այն բանի մասին, որ Ի. Ս. Տուրգենէվի ուղեղի կշիռը 2012 գրամմ է, այն ինչ հռչակաւոր բնագէտ Կիվիէի ուղեղը կշռում էր միայն 1,860 գրամմ։ Մինչև այժմ, սակայն, գիտական հետազօտութիւնները չեն ապացուցել, որ ուղեղի քանակութիւնը յարաբերութիւն ունի անհատի մտաւոր ընդունակութիւնների հետ։ Այնու ամենայնիւ առաջին տեղը այդ կողմից Տուրգենէվին չէ պատկանում։ Յունվար ամսին, երբ Գամբէտտա մեռաւ և յայտնվեցաւ, որ նրա ուղեղի կշիռը 1,100 գրամմ է, բժշկապետ Բէկ կարդաց այդ առարկայի վերաբերութեամբ մի զեկուցում Տիւբինգենեան համալսարանում, որի մէջ ասում էր, թէ լուրջ հետազօտութիւնից յետոյ, Կրոմվէլի ուղեղը կշռում էր 2000-ից մինչև 2,100 գրամմ, Կիվիէի ուղեղի կշիռը 1,861 գրամմ էր, իսկ Բայրօնի ուղեղը կշռում էր 1,807 գրամմ։ Հետևաբար, Տուրգենէվ երկրորդ տեղն է բռնում Կրոմվէլի և Կիվիէի մէջ։ Մի և նոյն ժամանակ հետաքրքիր էին բժշկապետ Բէկի եզրակացութիւնները. նա ասում էր, որ ֆրանսիացիների ուղեղի կշիռը բոլորովին այն չէ, ինչ որ գերմանացիների մօտ, և որ Կիվիէ, անտեսելով ֆրանսիացիներին պատկանելով, գերմանացի էր իր ուղեղի յատկութեամբ և կշռով։

* * *

Օտարոտի կատակ։ Ամերիկացի մի ծեր կալուածատէր թերագրում էր նստարին իր կտակը։ «Գրեցէք՝ իմ կնոջը տարեկան 500 դոլլար թոշակ։ Գրեցիք, պ. նոտար»։—«Գրեցի, բայց որովհետև ձեր ամուսինը դեռ ևս ջահել է և կարող է երկրորդ անդամ մարդու գնալ, այն ժամանակ ինչպիսի կարգադրութիւն կանէք այդ դէպքում»։—Դէ, լաւ, գրեցէք. «իսկ եթէ իմ կինը կը կամենայ երկրորդ անդամ մարդու գնալ, նա կը ստանայ հազար դոլլար տարեկան»։—Ի՞նչպէս, երկու անդամ աւելի։—«Այո, ի հարկէ, եթէ նրա ապագայ ամուսինը կարժանանայ այնպիսի պարգևի, որպիսին իմ կինն է, այն ժամանակ նրա համար խիստ ծանր կը լինի կեանքը»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ԿՐՕՆՇՏԱՏ, 14 Նոյեմբերի։ Նաւագնացութիւնը շարունակվում է։ Երէկ ծովից հասան կրօնշտատ երկու շոգենաւեր բեռնաւորվելու համար։ Սպասում են և ուրիշների։

ԽԱՐԿՕՎ, 14 Նոյեմբերի։ Վախճանվեցաւ յայտնի մանկավարժ և զեմստվոյի գործիչ Նիկոլայ Ալէքսանդրովիչ Կօրֆ։

ՕԴԷՍՍԱ, 14 Նոյեմբերի։ Յանկարծակի վախճանվեցաւ արքեպիսկոպոս Դիմիտրի։

ՐԻԲԻՆՍԿ, 14 Նոյեմբերի։ Վոլգայի վրա սառուց է լողում, 4° ցուրտ է։

ՉԵՐՆՊՕՎԻՑ, 14 Նոյեմբերի։ Շեկսնա գետը սառուցով ծածկվեցաւ։ $3^1/_2$° ցուրտ է։

ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա), 14 Նոյեմբերի։ Այս տեղի պահեստների մէջ ձմեռելու մնացել են 215000 չետվերտ ցորեն, 90000 չետվերտ հաճար, 25,000 չետվերտ կանեփ, 45000 չետվերտ շաղգամ 65000 չետվերտ գարի։ Բացի այդ, գետային նաւահանգիստներում հիւսիս-արևելեան քամիներից առաջացած ջրի փոքրութեան պատճառով կանգնած են 35 շոգենաւեր և փոքր նաւեր գաղան հացահատիկներով 120000 չետվերտից աւելի, որոնք պէտք է արտասահման ուղարկվեն։ Երկիւղ են կրում, որ այդ բեռն էլ ցրտերի պատճառով ձմեռը այդտեղ կանցկացնի։

ՄՕԳԻԼԵՈՎ-ՊՈԴՕԼՍԿԻ, 14 Նոյեմբերի։ Պոդօլսկի և Բէսսարաբիայի նահանգներում մեծ քանակութեամբ հաց է մնացել որ չէ ուղարկված Օդէսա, որովհետև այնտեղ ամեն տեսակ հացահատիկների գները ցածր են։

ՍՕՖԻԱ, 14 Նոյեմբերի։ Ռուսաց կայսրուհու ծննդեան օրի առիթով մայր-եկեղեցու մէջ մաղթանք կատարվեցաւ իշխան Ալէքսանդրի ներկայութեամբ։ Ազգային ժողովը յանձնեց իր նախագահին բոլգարացիների կողմից շնորհաւորութիւն ներկայացնել Նորին Մեծութեանը։

ԼՕՆԴՕՆ, 14 Նոյեմբերի։ Ֆրանսիական պատերազմական նաւը Նոյեմբերի 8-ին ռըմբակոծեց Բօտիմար քաղաքը Մադագասկարի հիւսիսային ափի վրա, որի ժամանակ սպանվեցան 5 անգլիացիներ։ Շատ գոյքեր աւերած և կողոպտված են։

ԲԵՐԼԻՆ, 14 Նոյեմբերի։ Պրուսական սեյմին ներկայացրած բիւդժէի համեմատ եկամուտները ծախսերից 29 միլիոն մարկ աւելի են։

ՄԱԴՐԻԴ, 14 Նոյեմբերի։ Գերմանական թագաժառանգը ներկայ էր ցուլերի կռուին, որտեղ հասարակութենից համակրութեամբ ընդունվեցաւ, իսկ յետոյ ներկայ գտնվեցաւ իրաւաբանական ակադեմիայի հանդիսաւոր բացմանը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 Նոյեմբերի։ Պետական փոխ-նահանգապետ Էսէն նշանակված է Լօմժէի նահանգապետ։ Սրբազան սինոդի Մոսկվայի բաժնի պրօկուրոր Պոտէմկին նշանակված է Գրոդնոյի նահանգապետ։ Լրագիրները հաղորդում են, որ պետական խորհուրդը որոշեց Դնեստր գետի վրա նաւագնացութեան պայմանները բարւոքելու համար 200000 ր. նշանակել 1884 և 1885 թուականներին։

ՓԱՐԻԶ, 15 Նոյեմբերի։ Կարգադրութիւններ են արված օդնական զօրքեր անյապաղ ուղարկելու համար Ցօնկին։ Արդէն նաւի վրա նստելու համար պատրաստ են երկու գունդեր, իսկ Ցօնկինի մէջ գտնված ափրիկական երեք բատալիօնների զինուորների թիւը կը հասնի մինչև 800-ի իւրաքանչիւրին։ Այդպիսով արշաւող զօրաբաժնին կաւելանան 5400 զինուորներ։

ԼՕՆԴՕՆ, 15 Նոյեմբերի։ Սուա մարդարէն մօտենում է Խարտում և սպառնում է զօրքերին՝ կապել յետ քաշվելու ճանապարհը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 Նոյեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 62 կ., երկրորդ 94 ր. 37 կ., երրորդ 94 ր. 37 կ., չորրորդ 94 ր. 37 կ., հինգերորդ 94 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 218 ր. երկրորդ 207 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 37 կ., երկրորդ 91 ր. 37 կ., երրորդ 91 ր., 37 կ., ոսկի 8 ր. 45 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ $23^5/_{16}$ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա $198^1/_2$ մարկ, Փարիզի վրա $245^1/_2$ ֆրանկ։ Բօրսայի արամադրութիւնը հանդարտ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայոց Կովկասի Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը խնդրում է Ընկերութեան արդէն անդամներին շնորհ բերել կիրակի, ամսիս 20-ին, առաւօտեան 11 ժամին, Արծրունու Թատրոնը, Ընկերութեան Ընդհանուր ժողովին, Ընկերութեան ընդհանուր ժողովի նախագահ և քարտուղար, Խորհրդի չորս անդամ և հինգ փոխ-անդամ ընտրելու, Ընկերութեան հաշիւները վերատուգող ցանձնաժողովի զեկուցումը լսելու և ցանձնաժողովից կազմված հրահանգը՝ Ընկերութեան ընդհանուր հաշիւը վերատուգող ցանձնաժողովի համար՝ քննելու և հաստատելու։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է, որ ներկայ Նոյեմբերի 18-ին, 12 ժամին, իր ներկայութեամբ լինելու է ածուրդ հետևեալ քաղաքային հողերը կապալով տալու համար։

1) Հաւաքարի հողերը 229 դեսեատին 1560 քառ. սաժէն չափով դաջ պատրաստելու համար, 1884 թ. յունվարից մինչև 1887 թուականի յունվարը։

2) Կուկիայի հողեր 888 դեսեատին 1800 քառ. սաժէն վարուցանքի և ուրիշ աշնանային պարապմունքների համար ներկայ տարվայ դեկտեմբերի 1-ից երեք տարի ժամանակամիջոցով։ և 3) Նաւթլուխի հողեր 194 դեսեատին 100 քառ. սաժէն արօտատեղի և պարտիզային բոյսերի համար 1884 թ. յունվարի 1-ից 1887 թ. յունվարի 1-ը։ Պայմանները կարելի է տեսնել վարչութեան մէջ 8—2 ժամը ամեն օր, բացի տօներից։ 3—3

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻԶՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա։



Միակ գործակալ ԼԻԱԿԱՆ ԹԱՆՈՒԹ տեղը կան ամենի համար մեծ ԳՐԻԶՆԵՐ էժան քան թէ նոյնպէս ԹԱՆԱՔՆԵՐ, գմուռ, ՄԱՐԼԻՉՆԵՐ, պենալ, ՆԵՐ, ծխախոտի ՆԵՐ, ածելիք, ՍՆԵՐ, ԲԱԶԿԱԹՈՒՐԱՐԿու կախելու ՏԻՆԵՐ, անոտներ, լուծիչ ԱՆԳԱՆՈՒԹ։ Նոյն տեսակ ձեռագրելու քանակութեամբ ամեն ձևի 25% ուրիշ տեղ։ Կան թուղթ, տետրակներ, քարեգրիչներ, քսակներ, մկրատներ, խալիչա-ՄԱՀՃԱԿԱԼ, վեհամար իրեր, ԳՕՄԱՏՈՒՅԱՐԱՆՆԵՐ, բրիտանական մետալից իրեր, ԼԱՊՏԵՐՆԵՐ, գդալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ, երես լուանալու ամաններ, ֆիլտրա, կրանշվոցներ, այգու մկրատներ, շորի շչէօտակալներ, երկաթէ թելերից, ձիու համար։ Մակենտոշներ։ Բժշկական թուղթ վատերկլօզատի համար և այլն և այլն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԱՆՈՒԹ։

96—100

ԲԱՑՈՒԱԾ Է ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ 1884 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ։

„ԱՂԲԻՒՐ"

ԳԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՄԻԱՄՍԵԱՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ։

(ՏԱՐԷՆԸ ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԻ 12 ՀԱՄԱՐ 2—3 ՏՊԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ)

Կը հրատարակվի մի և նոյն գիրքով, մի և նոյն ուղղութեամբ և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I. Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, առակներ, հեքիաթներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ։
II. Բանաստեղծութիւններ։
III. Գիտութիւն և արուեստ։
IV. Հետաքրքիր տեղեկութիւններ։
V. Այլ և այլք։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

VI. Մանկական, ֆրեբելեան, շախմատի և այլ խաղեր, ռեբուսներ, թւաբանական խնդիրներ։ Անեկդոտներ, հանելուկներ, շուտասելուկներ։
VII. Երգեր նոտաներով։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII. Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ։
IX. Առաջարկութիւններ, խորհուրդներ։
X. Մատենախօսութիւն և նոր գրքեր։
XI. Խառն լուրեր։

Պատասխաններ։ Յայտարարութիւններ։

Երկրորդ բաժինը կը հրատարակվի առանձին թերթերով տարէնը չորս անգամ։

Տարեկան բաժանորդները կըստանան երկու պրէմիա, յուլիսին և դեկտեմբերին։

„ԱՂԲԻՒՐԻ" *տարեկան բաժանորդագինը 3 ռուբլի է, կէս տարվանը 2 ռուբլի։*

Հասցէն՝ Тифлисъ, редакція „Агнюръ", *իսկ արտասահմանից՝* Tiflis (Caucase) Rédaction du journal „AGBUR".

„ԱՂԲԻՒՐԻՆ" *Թիֆլիսում կարելի է ստորագրուել և հայ գրավաճառանոցներում, պ. Շահվերդեանի պավիլիոնում ու Մանկական գրադարանում։*

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ։

1—3

Մ. Ն. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՕԼԻՔՍԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՐ, *զանազան աթոռներ 35 ռուբլուց դիւժինը, բազկաթոռներ 6 ռ., դիվաններ 12—25 ռ., կաչելի, մանկական աթոռներ և այլն։* ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, *ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծալվող սամովարներ։ Ջեմոդաններ 2 ռ. 75 կ.—26 ռ., սակմոյաժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սումկաներ,* ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՂԵՐ *5 ռ. 50 կ.—30 ռ.։*

Սամովարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կոֆէյնիկ, թէյամաններ, ութաներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ *ամաններ 40 ռ., երես լուանալու պղնձէ և ժեստի ամաններ։*

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ *9 ռ., տուալէտի հայելիներ 2 ռ. 40 կ.—13 ռ., զանազան մետալների մոմակալներ 1 ռ.—15 ռ., սեղանի դգալներ 4 ռ. 50 կ. և թանգ, թէյի դգալներ ֆրաժէի, մելխիորի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղեր 2 ռ.—26 ռ.։*

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ *կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պողպատէ և երկաթէ դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի։*

ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ *զանազան տեսակի 3 ռ. 50 կ.—35 ռ., պատրոններ ռէվոլվերների համար, հրացան 6 ռ. և աւելի, զանազան վեշալկաներ, կշիռքներ։ Անգլիական և ամերիկական կլէօնկա 50 կ.—2 ռ. արշինը։*

Մշտապէս ունեմ 10,000 ֆ. ԹԷՑ *Պօպով եղբայրների,* ԿՈՖԷ ՄԻԽԵԼՍՕՆԻ, *թէյի համար խմբեղէն էյնեմի,* ՐԷՑՆԳԱՐԻՒ *սիգարներ, հոտաւէտ ջուր (Օդեկոլոն) ծխվող փոշիք, պուդրա, գլխցերինի սապօն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։*

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ *գալանտերէյի զանազան* ԱՊՐԱՆՔՆԵՐ, *ծխախոտի արկղ, դրամարկղ, քսակներ, սանդրներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, գինուորական գամշի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօնզի և մարմարիօնի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մատիաներ, գրչակոթեր, սուրգուչ, փօստի թուղթ, ծրարներ և այլն։*

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ *խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և դեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ։*

Վերև յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում ես ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ *և* ՌՈՒՍԱՍՏԱՆԻ *գործարաններից անմիջապէս։*

Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել. Тифлисъ. М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.

77—100

Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ

լրագրական գործակալութեան գրավաճառանոցում

ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

Բաժանորդագրվում են ամեն տեսակ պարբերական հրատարակութիւններին, ինչպէս տեղական, Ռուսաստանի, նոյնպէս և Արտասահմանեան։

Հասցէն։—Тифлисъ. въ Газетное Агентство В. Шавердова.

5—10

ԹԻՖԼԻՍԻ *տեխնիկական ուսումնարանի մօտ ծախվում է* ԴԱՏԱՐԿ ՀՈՂ։ *Գնի մասին տեղեկանալ՝ Գօլովինսկի պրոսպէկտ, տուն Սարաջևի, № 14։*

4—6 (3)

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *յայտնում է, որ Երևանեան հրապարակի վրա քաղաքային տան մէջ խանութների չինութիւնը կը վերջանայ մինչև 1884 թուականի յունվարը և այդ պատճառով ցանկացողներին վարձել այդ խանութները հրաւիրում է հիմիկուց յայտնել, որպէս զի վերջացնելուց յետոյ խանութները փոփոխութիւնների չենթարկվեն։ Կարելի է յայտնել քաղաքային վարչութեան մէջ ամեն օր մինչև ժամի 2-ը։*

3—3

Շատ ՁԵՌՆՏՈՒ գնով ծախվում է ՏՈՒՆԸՍ *և նրա մօտի* ԱՑԳԻՆ, *որ գտնվում է Նախիջևան գաւառի* ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ *մէջ և որ պատկանում է ինձ, նոյն գիւղի բնակիչ* ՄԵՀՐԱԲ ՄԵՀՐԱԲԵԱՆՑԻՆ։ *Խնդրում եմ պ. պ. ցանկացողներին դիմել ինձ այս հասցէով,* ԱԳՈՒԼԻՍ, ՄԵՀՐԱԲ ՄԵՀՐԱԲԵԱՆՑԻՆ։

2—3

Ծանուցումն

Առաջնորդական յանձնաբարութեանց ցանձնաժողովը յայտնում է Տփխիսի թեմի բոլոր եկեղեցիների Մեծ. երեցփոխաններին որ համաձայն բարձրագոյն հաստատված կանոնագրութեան 122 յոդուածի, երեցփոխական պաշտօնավարութիւնը լինում է երեք տարի ժամանակով (նոր ընտրութեան ժամանակ երեցփոխանը կարող է վերընտրելի լինել)։ ուստի այն երեցփոխանները, թէ Տփխիսի և թէ նրա վիճակի, որոնք լրացրել կամ լրացնելու մօտ են իրանց եռամեայ ծառայութեան շրջանը, հրաւիրվում են երկու ամիս առաջ գրաւոր յայտնելու մերձաւոր հոգևոր իշխանութեանը, որ կարգադրութիւն անի նոր ընտրութեան մասին։ Ցանձնաժողովը արդէն մշակում է երեցփոխանների համար պէտք եղած հրահանգը և յոյս ունի շուտով հրատարակելու։

Անդամ յանձնաժողովի՝ Ցարութիւն աւագ քահանայ Սուքանանձեանց

Քարտուղար Եղնիկ քահ. Երզնկեանց

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈՒԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ «Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.»

Չորեքշաբթի, նոյեմբերի 9-ին հասաւ ՓՕԹԻ MEUSE (ՄԵՕԶ) *շոգենաւը, որի նաւապետն է* ԺԻԲՈՒԷՆ (GIBOIN) *և* ՓՕԹԻԻՑ *կը վերադառնայ* ՏՐԱՊԻԶՕՆ, Կ. ՊՕԼԻՍ *և* ՄԱՐՍԷԼ *չորեքշաբթի օր, 16-ին նոյեմբերի, իսկ* ԲԱԹՈՒՄԻՑ *ուրբաթ օր 18-ին նոյեմբերի եթէ եղանակը նպաստաւոր լինի նաւագնացութեանը։*

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան ագենտներին. Փօթիում պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, *Բաթումում պ.* ՀԵՌԻՄԵԱՆՑԻՆ *և Թիֆլիսում պ.* ԲԸՆՕԻՆ, *Ագծրունու գալերէայում, № 194*

5—5

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, *մազերը ամրացնող և նրանց* ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ *վերադարձնող։ Գինը 2 ռ. շիշը,* ՓՈՍՏԱՅՈՎ *ուղարկված 2 ռ. 49 կոպ.* ԱՆԳԼԻԱԿԱՆ *խանութի մէջ*

Մի և նոյն տեղը ԹԻՆԱՅԻ ԻԻՂ, *մազերը ամրացնելու համար, 1 ռ. ամանը և վրձին գլխադաւի դէմ,* ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ *և հոտաւէտ ջրեր և այլն։*

84—100

ՎԻԵՆՆԱՅԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՄԱՆԻ

ԲԱԹՈՒՄ, ՏՈՒՆ ԹԱՅԻՐՕՎԻ

Մեծ քանակութեամբ ապրանքների պահեստ և վաճառատուն, ուր գտնվում են մեծ քանակութեամբ ամեն տեսակ կօշիկներ-ոտնամաններ, գուլպա-չուլքիք, հովանոցներ-զոնտիկներ, հագուստներ տղամարդի և կանանց, աղլուխներ-բաղդադիք կովկասի ճաշակով, շապիկներ, ժամացոյցեր, ոսկէ և արծաթէ։ Ամեն տեսակ սպիտակեղէններ (շուշեղէն), որպէս են ստաքաններ, վազեր և այլն։ Նոյնպէս և դանակներ, պատառաքաղներ-գդալներ ֆրաժի ֆաբրիկից և հասարակ տեսակներից, կոճակներ, քաթանեղէն, գլխարկներ և այլն և այլն ամեն ապրանքից գտնվում են մեծ քանակութեամբ շատ տեսակներով։ Ծախվում են ֆաբրիկի գնով և առանց աւելցուկի (безъ-запроса)։ Ընդունում է պատուէրներ օտարքաղաքներից ամեն տեսակ ապրանքների։

Հասցէն БАТУМЪ, Мани, д. Таирова.

ՄԱՆԻ

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Ноября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.